ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07
վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

06.04.2018թ. ժ.11: 00

***Մասնակցում էին՝*** *Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Վ,Դավթյան, Ա.Սաֆյան (խորհրդի անդամներ):*

***Հրավիրված էին՝*** *Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Ա.Վարդանյան (իրավաբանական բաժնի պետ), Գ.Մարտիրոսյան (նախագահի խորհրդական), Ն.Մանդալյան, Լ.Մարկոսյան, Լ. Ավետիսյան, Հ.Ջանլաթյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Հակոբյան:*

**Օրակարգի նախագծում հինգ հարց.**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2017 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

3. «Լևոն Միրզոյանին Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահի տեղակալի պաշտոնից ազատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Ս.Մնացականյան /*

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. «Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2018 թվականի փետրվարի 21-ից 22-ը «ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) և ՄԱԿ-ի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից կազմակերպված «Բնապահպանական-տնտեսական հաշիվների համակարգի (ԲՏՀՀ) ներդրում» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Ն.Մանդալյան/*

4.2. «Հաղորդում Իտալիայի Թուրին քաղաքում 2018 թվականի փետրվարի 26-ից 28-ը «Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) միջազգային ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) 5.ա.1 և 5.ա.2 ցուցանիշների վերաբերյալ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) վերապատրաստման սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Ա.Սաֆյան/*

4.3. «Հաղորդում ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2018 թվականի մարտի 6-ից 9-ը ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 49-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ»:
*/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/*

4.4. «Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2018 թվականի մարտի 8-ից 9-ը «2017 թվականի հոկտեմբերի 5-ին կայացած Արևելյան համագործակցության վիճակագրական հարթակ 2-ի շրջանակում քննարկումներ, ինչպես նաև տնային տնտեսությունների կենսապայմանների վերաբերյալ տվյալներ հավաքագրելու եվրոպական ստանդարտներն և առկա մարտահրավերները» խորագրով նիստերին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Լ.Մարկոսյան, Լ. Ավետիսյան/*

4.5. «Հաղորդում՝ Ուկրաինայի Օդեսա քաղաքում 2018 թվականի մարտի 12-ից 16-ը «EU4Energy ծրագրի շրջանակում Էներգիայի միջազգային գործակալության (IEA) կողմից կազմակերպված Ամսական վիճակագրության՝ ներառյալ Համատեղ Կազմակերպությունների Տվյալների Նախաձեռնության (JODI)» դասընթացին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Հ.Ջանլաթյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Հակոբյան/*

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2017 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2017 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ծրագրերի.

Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (01.03.02.01) առ 01.01.2018թ.

(հազ.դրամ)

| ԱԿՏԻՎ | | | ՊԱՍԻՎ | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հիմնական միջոցներ | 583390.58 | 1 | Ֆինանսավորում | 14899.0 |
| 2 | Նյութեր և պաշարներ | 14010.49 | | այդ թվում՝ բյուջեից | 14093.93 |
| 3 | Սակավարժեք և արագամաշ առարկաներ | 29335.02 | | | |
| 4 | Ծախքեր արտադրության և այլ նպատակների | - | | այլ միջոցներ | 805.07 |
| 5 | Դրամական միջոցներ | - | 2 | Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ | 612725.6 |
| 6 | Հաշվարկներ | 1053.41 | 3 | Հաշվարկներ | 164.9 |
| 7 | Ծախսեր | - | 4 | Արտադրանքի իրացում և եկամուտներ | - |
| 8 | Վնասներ | - | 5 | Կապիտալ շինարարության ֆինանսավորում | - |
| 9 | Կապիտալ շինարարության ծախսեր | - | 6 | Եկամուտներ հատուկ միջոցների գծով | - |
| 10 | Ընթացիկ հաշիվ այլ արտաբյուջետային միջոցների գծով | - | | | |
| | ՀԱՇՎԵԿՇԻՌ | 627789.50 | | ՀԱՇՎԵԿՇԻՌ | 627789.50 |

Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում (01.03.02.02) առ 01.01.2018թ.

(հազ.դրամ)

| ԱԿՏԻՎ | | | ՊԱՍԻՎ | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հիմնական միջոցներ | 60313.95 | 1 | Ֆինանսավորում | 4753.93 |
| 2 | Նյութեր և պաշարներ | 4231.51 | | այդ թվում՝ բյուջեից | 4722.27 |
| 3 | Սակավարժեք և արագամաշ առարկաներ | 2108.21 | | | |
| 4 | Ծախքեր արտադրության և այլ նպատակների | - | | այլ միջոցներ | 31.66 |
| 5 | Դրամական միջոցներ | - | 2 | Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ | 62422.16 |
| 6 | Հաշվարկներ | 522.42 | 3 | Հաշվարկներ | 0 |
| 7 | Ծախսեր | - | 4 | Արտադրանքի իրացում և եկամուտներ | - |
| 8 | Վնասներ | - | 5 | Կապիտալ շինարարության ֆինանսավորում | - |
| 9 | Կապիտալ շինարարության ծախսեր | - | 6 | Եկամուտներ հատուկ միջոցների գծով | 13675.97 |
| 10 | Ընթացիկ հաշիվ ըստ հանձնարարությունների գումարի | 13675.97 | | | |
| | ՀԱՇՎԵԿՇԻՌ | 80852.06 | | ՀԱՇՎԵԿՇԻՌ | 80852.06 |

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

1. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի հաշվեկշիռ մուտքագրել ստացված՝ ընդամենը 14 268 538 դրամ արժեքով տվյալների պահպանման էլեկտրոնային սարքավորումները:

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թ.-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված հավելվածի

1) 2-րդ տողի «425 745.6» թիվը փոխարինել «440 014.1» թվով,

2) «ընդամենը» տողի «643 704.5» թիվը փոխարինել «657 973.0» թվով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

3. «Լևոն Միրզոյանին Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահի տեղակալի պաշտոնից ազատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ս.Մնացականյան /*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահի տեղակալ Լևոն Միրզոյանին 2018 թվականի ապրիլի 9-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ իր դիմումի համաձայն:

*/Միահամուռ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. «Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2018 թվականի փետրվարի 21-ից 22-ը «ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) և ՄԱԿ-ի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից կազմակերպված «Բնապահպանական-տնտեսական հաշիվների համակարգի (ԲՏՀՀ) ներդրում» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ն.Մանդալյան/*

4.2. «Հաղորդում՝ Իտալիայի Թուրին քաղաքում 2018 թվականի փետրվարի 26-ից 28-ը «Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) միջազգային ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) 5.ա.1 և 5.ա.2 ցուցանիշների վերաբերյալ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) վերապատրաստման սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ա.Սաֆյան/*

4.3. «Հաղորդում՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2018 թվականի մարտի 6-ից 9-ը ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 49-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ»:

*/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/*

4.4. «Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2018 թվականի մարտի 8-ից 9-ը «2017 թվականի հոկտեմբերի 5-ին կայացած Արևելյան համագործակցության վիճակագրական հարթակ 2-ի շրջանակում քննարկումներ, ինչպես նաև տնային տնտեսությունների կենսապայմանների վերաբերյալ տվյալներ հավաքագրելու եվրոպական ստանդարտներն և առկա մարտահրավերները» խորագրով նիստերին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Լ.Մարկոսյան, Լ. Ավետիսյան/*

4.5. «Հաղորդում՝ Ուկրաինայի Օդեսա քաղաքում 2018 թվականի մարտի 12-ից 16-ը «EU4Energy ծրագրի շրջանակում Էներգիայի միջազգային գործակալության (IEA) կողմից կազմակերպված Ամսական վիճակագրության՝ ներառյալ Համատեղ Կազմակերպությունների Տվյալների Նախաձեռնության (JODI)» դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Հ.Ջանլաթյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Հակոբյան/*

**Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Միահամուռ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ